# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

---

ք. Երևան 18.07.2019թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի**
**թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/43**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/28, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/29, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/31, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/32, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/33 և ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/34 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերի շրջանակներում «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 19.06.2019թ. ներկայացված և 20.06.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/43 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

### 1. «Վերիտաս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Վերիտաս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարվել են ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/28, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/29, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/31, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/32, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/33 և ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/34 ծածկագրերով ընթացակարգեր:

Սույն բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ պատվիրատուի կողմից չի հրապարակվել գնումների պլանը:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 16-րդ և 17-րդ կետերի՝

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Ընկերությունը ներկայացված բողոքով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է արգելել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ին ընդունել որոշումներ, կնքել պայմանագիր և պարտավորեցնել պավիրատուին չկայացած հայտարարել ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/28, ԳԼ-ԳՀԾՁԲ-19/29, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/31, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/32, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/33 և ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/34 ծածկագրերով ընթացակարգերը:

Ի լրումն ներկայացված բողոքի Ընկերությունը հայտնել է հետևյալը.

1. «Պատվիրատուի կողմից բոլոր վերոնշյալ ընթացակարգերը հայտարարվել են պայմանով, մասնավորապես նշվել է հետևյալը «209 թվականին ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի միջոցով»:

2. Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Ընկերությունը գտնում է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատվիրատուի մոտ առկա չէ վերոնշյալ կետերից որևէ մեկը, ապա չկա իրավական հիմքեր վերոնշյալ ընացակարգերը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով իրականացնելու համար:

Ընկերությունը խնդրել է բողոքի առարկա հանդիսացող ընթացակարգերը վերահայտարարելու դեպքում պարտադրել պատվիրատուին չկիրառել Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.06.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**2. <u>«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 20.06.2019թ. գրությամբ դիմել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ին՝ սույն բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ:

Սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.06.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

**3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2019/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ԳԲՔԱ-ՆԳ-2019/43 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար հայտարարվել են ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/28, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/29, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/31, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/32, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/33 և ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/34 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր:

2. Սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ www.procurement.am կայքում առկա չէ հրապարակված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի 2019թ. գնումների պլան:

**<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Վերիտաս» ՍՊԸ-ի 19.06.2019թ. բողոքը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ **<u>գնումների պլանավորումը</u>**, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը**, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում **պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանվում է, որ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:** Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար կազմակերպվել են ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/28, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/29, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/31, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/32, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/33 և ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/34 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգեր, որոնց հայտարարությունները և հրավերները www.procurement.am (www.gnumner.am) կայքում հրապարակվել են 12.06.2019թ. և 13.06.2019թ.:

Այսպիսով, վերը նշված իրավական կարգավորումների համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, մինչդեռ արձանագրում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ սույն որոշումը հրապարակելու օրվա դրությամբ առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am (www.gnumner.am) հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի 2019թ. գնումների պլան, որտեղ սահմանված կարգով ներառված կլինեն ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/28, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/29, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/31, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/32, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/33 և

ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/34 ծածկագրերով ընթացակարգերի գնման առարկա հանդիսացող ապրանքները և ծառայությունները:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ բողոքը սույն մասով հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն դիտարկմանը, որ չկա իրավական հիմքեր վերոնշյալ ընացակարգերը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով իրականացնելու համար, ապա սույն մասով արձանագրում եմ, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի 2019թ. գնումների պլանի բացակայության պայմաններում հնարավոր չէ արձանագրել բողոքի առարկա հանդիսացող ընթացակարգերի դեպքում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը կիրառելու իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից 19.06.2019թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ին ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/28, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/29, ՍԳԼ-ԳՀԾՁԲ-19/30, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/31, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/32, ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/33 և ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-19/34 ծածկագրերով գնանշման հարցման ընթացակարգերը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

**Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝** **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**